

Առտուն՝ իմ ալ թելես բռնեց ու տարաւ
 Բըլուրէն վեր, դէպի դաշտերը տամուկ:
 Եւ անապակ իր աչքերուն նայեցայ,
 Եւ աշխարհնե՛ր տըլաւ հոգւոյս իբր ընծայ.
 Յորիզոններ՝ ուր լոյսն անհուն կը ցնծայ:
 Եւ հոտեւան ձեռքին եղայ ուշադիր՝
 Որ շէշտակի Գարնան Յիւղը ցոյց կու տար,
 Որուն դըրան առջին կանգուն կը խայտար
 Ծաղկապատար Յիւղին Գարունն անպատիր:
 Ծաղիկ մըն էր, ա՛ն ալ, փափուկ ու բուրեան.
 Ծաղիկ՝ վարսերն ոսկինարգես՝ ու ծաղիկ՝
 Թարթիչներն ու աչքեր, ճակատը շուշան,
 Եւ այտերը կակաջ, բերնակն ատրուշան,
 Թուշը շափրակ, այծտերեւի՝ իր ձեռքեր:
 Եւ իր հոգին բուրմունքի հեշտ երգն ունէր,
 Արփիացող, ջերմին ինչպէս ծաղկանոց:
 Ու կը կանչէր գունեղ Գարունն Յիւղին՝ գիս
 Իր համբոյրին՝ ինչպէս նայադն երագիս...

Գ

19. ԵՐԳԸ

Ժամը վեցն է. հիւղակը ծառերուն դէմ կը խնդայ,
 Ու չարանճար հովիկն ալ՝ ծաղիկներուն խաղընկեր՝
 Կը պղպըջայ անհանդարտ, պզտիկ երգեր կը կարողայ,
 Եւ կամ նայիս մերթ գաղտնի լըճակին ծոցն է ինկեր:
 Ես երագուն, ջըրեգրի ուռենիին կռթընսած,
 Միջօրէին մէջ անհետ՝ թելն ըղձանքիս կը փնտռեմ
 Մըտամուր. Եւ յանկարծ նուրբ կամրջակ մը ոսկի՝
 Յիւղէն երգ մը՝ կ'երկարի մինչեւ ավուսքը նըսեմ,
 Մինչեւ ավուսքն իմ հոգւոյս՝ ուր կոհակ մը յեղակարծ՝
 Ոսկի գետէն արեւին՝ եղկ ու հանդարտ կը պառնկի:
 Օ՛հ, Գարունն է Յիւղակին, շատրըւանը իմ հոգւոյս՝
 Որ լուսասփիւռ ցայտք մըն ալ ինծի նըլէր կը խրկէ.
 Ու միջօրէն բովանդակ մետաքսահիւս ցանց մըն է,
 Ուր բռնըւած կը կանչէ բաղձիկ թռչնակն իմ հոգւոյս:
 Պիտի սիրե՛ք եզ հոգիս, պիտի սիրե՛, սիրո՛ղ ձայն,
 Զու հոգիեղ բաժնըւող ցայտուն կոհակն արծաթի՝